ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(15 հուլիսի, 2012)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տէր, բարւոք է մեզ ասպ լինել»:
«Տե՛ր, լաւ է, որ մենք այսպեղ ենք»:
(Մատթ. ԺԷ. 4):

Սիրելի հավատացյալներ,

Այսօր կրկին տոն է մեր եկեղեցիներում: Այսօր կրկին ուրախության, ցնծության եւ խնդության առիթ ունենք: Այսօր կրկին կարող ենք ձայնակցել Պետրոս առաքյալին ու միաբերան ասել. «Տե՛ր, լաւ է, որ մենք այսպեղ ենք»: Որքան էլ որ խորհրդավոր է օրվա տոնի իմաստը, որքան էլ հրաշապատում, սակայն այդքան էլ մարդկային է ու մեզ համար հասկանալի եւ ըմբռնելի: Տեսնում ենք, թե ինչպես մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս իր առաքյալներից երեքի հետ բարձրանում է Թաբոր լեռը՝ աղոթքի կանգնելու: Առաքյալներից մեկը՝ Պետրոսն էր, ով վեց օրեր առաջ համարձակորեն Տիրոջ հարցումին պատասխանեց, թե դու ես Քրիստոսը՝ Աստուծո Որդին. Պետրոսը, ով ամենուր եւ ամեն պարագայում հարցումներ եւ պնդումներ էր կապարում Տիրոջը, եւ հայտնի էր իր համարձակությամբ: Եւ ահա եւս երկու առաքյալ՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, որոնց մայրը օրեր առաջ խնդրում էր Հիսուս Քրիստոսին, որպեսզի իր զավակները երկնքի արքայության մեջ առաջին տեղերը զբաղեցնեն: Եւ չի ուշանում Հիսուս Քրիստոսի պատասխանը, թե արդյոք այդ զավակներդ կարող են ըմպել այն բաժակը, որ Ինքը պետք է ըմպեր: Ու տեսնում ենք այս երեք առաքյալներին լուռ հետեւելիս իրենց Ուսուցչին՝ իրենց Վարդապետին:

Օրը երեկո էր, եւ թերեւս երկար ճամփորդությունից հետո նրանք հոգնել էին, եւ ինչպես որ ավետարանիչներն են ասում՝ նրանք քնկոտ էին եւ ուզում էին քնել: Այդպիսի մի պարագայի ականջալուր պիտի լինեինք օրեր հետո, երբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս Իր երկրավոր կյանքի ամենադժվարին եւ կիզակետային պահին աղոթքի էր կանգնել, առաքյալները կրկին ննջում էին: Եւ թերեւս իրենց այդ ննջելով՝ անգիտակից էին այն մեծ խորհրդին, որ տեղի պիտի ունենար: Նույնը եղավ պայծառակերպության այդ գեղեցիկ պահին:

Հիսուս Քրիստոսի աղոթքի կանգնած ժամանակ տեղի ունեցածը մարդկային

բարբառը չի բավականացնում այն նկարագրել: Ավետարանիչներն իրենց սահմանափակ լեզվի կարողություններն ի սպաս դնելով՝ մեզ հասկանալի բառերով են փորձում արտահայտել այն՝ ինչ տեղի ունեցավ: Հիսուս Քրիստոս այլակերպվեց, Նրա դեմքը պայծառացավ՝ ինպես ձյունն էր, Նրա դեմքի արտահայտությունը այնքան ճերմակ էր, որ երկրի վրա սպիտակեղեն լվացողները չէին կարող այդպես ճերմակություն ստանալ: Ահա մարդկային այն թույլ ու տկար բառերը, որոնցով փորձում են ընդգրկել անպարտակելի այդ մեծ խորհուրդը: Այդ իսկ պատճառով որքան որ խորհրդավոր է, այնքան էլ մարդկային է այդ տոնը:

Շատերի համար իրականությունն այն է՝ ինչ տեսնում են, եւ բազումների համար իրականությունն այն է ինչ շոշափելի է եւ կարող են հաշվել ու չափել: Այդ տոնի վկաները սակավ մարդիկ են՝ երեք անձեր: Բայց այդ տոնի վկայության հետեւորդներն այսօր միլիարդավոր են եւ երբեւէ հարցականի տակ չեն դնում այն՝ ինչ եղել է դարեր առաջ: Մեր մարդկային սահմանափակ մտածումով եւ կարողությամբ թերեւս հաջողվի ու կարողանանք նկարագրել եւ ասել, թե ինչ է տեղի ունեցածը, բայց միշտ դժվարությունը պիտի ունենանք մեկնաբանելու, ապացուցելու եւ թերեւս հասկանալու, թե ինչո՞ւ է կատարվել, ինչ է տեղի ունեցածը:

Հիսուս Քրիստոս երբ Իր աշակերտների առջեւ հայտնվում է Իր ամբողջ փառքով եւ ամպը, որ այդ մարդկանց՝ հրեա հասարակ ժողովրդին հասկանալի էր, թե ինչ է խորհրդանշում, որն Աստծու անմիջական ներկայությունն էր, որի վկայությունն ունեցել են Հին Կտակարանում, ծածկում է ամբողջ այդ ներկաներին, եւ մի ձայն է հնչում, թե «դա է իմ սիրելի Որդին, Ում ընտրել եմ, Նրան հետեւեցեք»: Պատահական չէ Պետրոսի արձագանքն այդ ամենին, երբ ուրախ, ինչու չէ՝ հիացած, վախվորած եւ զարմացած պատասխանում է եւ ասում. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք»: Հասկանալու համար այդ մեծ ուրախությունը, որ ապրում էին Պետրոսն ու մյուս առաքյալները, ինքներս մեզ դնենք այդտեղ եւ կհասկանանք, որքան մեծ է նրանց ուրախությունն ու զարմանքը՝ ոչ թե լինել անմիջապես Տիրոջ կողքին, այլ տեսնել Տիրոջը լույսերի մեջ փառավորված, լսել Հայր Աստուծո ձայնը եւ մասնակից լինել Նրա փառքին:

Քրիստոնյայի կյանքի վերջնանպատակը միությունն է մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հետ, քրիստոնյայի կյանքի վերջին նպատակն Աստծուն տեսնելն է, աստվածային լույսին եւ աստվածային փառքին հաղորդակից լինելը: Եւ ահա այդ փառքին հաղորդակից եղան երեք առաքյալներ: Առաքյալներ, ովքեր օրեր հետո պիտի լքեին նրան, բայց հետո հասկանալով ամեն ինչ՝ պիտի գործեին եւ դարեր շարունակ նրանց գործը պիտի շարունակվեր եւ պիտի առաջնորդեր ու ուղենշվեր կյանքի գիծը միլիարդավոր քրիստոնյաների:

«Տեր, բարւոք է մեզ ասա լինել». այսօր դարեր հետո յուրաքանչյուրս դիմենք Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին եւ Պետրոսի նման համարձակ կրկնենք այդ հավատումը, որ մեզ համար եւս այս պահին երջանկաբեր եւ ուրախաբեր է այստեղ լինել, լինել Նրա խոսքին հաղորդակից, հաղորդակից լինել Նրա Մարմնին եւ Արյանը եւ ամբողջությամբ մասնակից լինել Նրա փառքին, որն այսօրվա խորհրդի մեջ տարածվում է ամենուր:

Ուղղափառ ապրվածաբանության մեջ. սիրելինե՛ր, Թ-աբոր լեռան վրա տեղի ունեցածը ոչ միայն հրաշք է, այլեւ Աստուծոյ հայտնության բացարձակ իրականություն: Աստված բազում ձեւերով է հայտնել Իրեն մարդկության պատմության ընթացքում: Եւ այդ բազմատեսակ հայտնություններից մեկը Պայծառակերպության խորհուրդն է, Պայծառակերպության գեղեցիկ իրականությունը: Ինչպես որ յուրաքանչյուրս այսօր հարության խորհրդին հավատում եք մեկ անձի վկայությամբ եւ հրեշտակի ավետմամբ, այսօր էլ մենք որպես քրիստոնյաներ՝ աննկուն հավատքի եւ կամքի տեր անձնավորություններ, երեք հոգու՝ երեք անձնավորությունների վկայությամբ է, որ հավատում ենք Աստուծոյ փառքի կատարյալ հայտնությանը, եւ այդ հայտնությունը կրողներ որպես՝ խնդրենք, որ Աստված Իր լույսով ողողելով երեք անձնավորությունների՝ սկիզբը դրեց մի ամբողջ նոր կյանքի եւ նոր առաքելության, մենք էլ մաս եւ բաժինը լինելով այդ կյանքի եւ առաքելության՝ այդ հայտնությունը ոչ միայն ապրենք մեկ օր, այլ ապրենք մեր կյանքի ուրախության մի օրը՝ դրանով լցնելով մեր կյանքը աստվածային հայտնությամբ եւ Աստուծոյ լուսով:

Թ-ող պայծառակերպյալ Տերն Իր օրհնությունները բաշխի ամենքիս այսօրվա միջոցով եւ Թ-աբոր լերան լույսը միշտ առաջնորդի մեր ընթացքն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: